



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամլո հաղորդագրություն

18-ր սեպտեմբերի, 2009թ.

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը հանրությանն է ներկայացնում իր գործունեության հաշվետվությունը

Երևան, Հայաստան – 2009թ. սեպտեմբերի 18-ին կայացավ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի մամլո ասուլիսը, որի ընթացքում ՇԽ-ում ներկայացված քաղաքացիական հասարակության անդամները խոսեցին անցած տարվա ընթացքում ծրագրում ունեցած իրենց նպաստի և ներգրավվածության մասին: ՇԽ հանրային հաշվետվության մեջ տեղ էին գտել խորհրդի անդամների գործունեության այնպիսի հարցեր, ինչպիսիք են ՇԽ գործունեությունը կարգավորող մի շարք փաստաթղթերի վերանայումը և հաստատումը (ներառյալ Կառավարման խորհրդի անդամների պատվիրակման, շահերի բախման հարցերի հստակ սահմանմանն առնչվող հարցեր), Կառավարման խորհրդում շահառուների դիրքորոշումը ներկայացնելը, կամ հայաստանյան և ԱՄՆ կողմի պաշտոնյաների հետ ծրագրի հետագա իրականացմանը և կայունությանը առնչվող խնդիրների քննարկումը: ՇԽ անդամները ևս մեկ անգամ հայտնեցին իրենց համոզմունքը, որ ՀՄՀ-Հայաստանի կողմից օգտագործվող այն մոդելը, ըստ որի քաղաքացիական հասարակությունը ներգրավվում է լայնածավալ ներդրումային կամ զարգացման ծրագրերում, ինչպես նաև պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերում կարևոր դերակատարում կարող է ունենալ ծրագրերի արդյունավետ իրականացման գործում թափանցիկությունը և արդար ու մասնակցային կառավարումն ապահովելու համար:

ՇԽ ներկա կազմը երրորդն է սկսած 2006թ-ին ծրագրի մեկնարկի պահից: Խորհրդի 15 անդամներն ընտրվել են ավելի քան 380 ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունների կողմից և ներկայացնում են քաղաքացիական հասարակության լայն շերտեր, այդ թվում մարզային և համայնքային կազմակերպություններ, ջրօգտագործողների ընկերություններ, մարդու իրավունքներով զբաղվող խմբեր, զարգացման ՀԿ-ներ և այլն:

Շահառուների խորհուրդը հանդիսանում է մի մեխանիզմ, որի միջոցով քաղաքացիական հասարակությանը և մարզերի ու համայնքների ներկայացուցիչներին հնարավորություն է տրվում ներգրավվել ՀՄՀ-Հայաստան Ծրագրի իրականացմանն ու կառավարմանը: :

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ ծրագրի նպատակն է նվազեցնել Հայաստանում գյուղական աղքատությունը՝ ներդրումներ կատարելով գյուղատնտեսության ոլորտի տնտեսական ցուցանիշների բարելավման ուղղությամբ: Ծրագրային գործունեության հիմնական ուղղություններն են՝ ոռոգման ենթակառուցների վերականգնումը, ջրի կառավարման կառույցների հզորացումը, ֆերմերների վերապատրաստումը և տեխնիկական օժանդակությունը, գյուղական վարկավորման մատչելիությունը և այլ հարակից աշխատանքներ:

Այս միջոցառման և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: